## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

## ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/23 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **08 մայիսի 2026թ.**

2026թ. մայիսի 08-ին ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի տեղի ունեցավ սերմերի ձեռքբերման թիվ ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/23 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Գ. Մնացականյան՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամի Բալահովիտ ՈՒՓՏ տնօրենի պ/կ,

Լ. Մինասյան՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամի Բալահովիտ ՈՒՓՏ անասնաբույժ,

Ռ. Ազիզյան՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամի Բալահովիտ ՈՒՓՏ պահեստապետ:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Գ. Մնացականյանը, ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ս. Մելքոնյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից և նիստին էլ մասնակցել են բոլոր երեք անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

### ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Ընթացակարգը չկայացած հայտարարելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

### 1. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Ս. Մելքոնյանը՝ Հանձնաժողովի անդամներին տեղեկացրեց, որ Ընթացակարգի շրջանակում հաղթող (ընտրված) մասնակից ճանաչված «ԱՐՍՇԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ը սահմանված ժամկետում՝ 06.05.2026թ. ներառյալ, գրավոր չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները և վերջիններս ներկայացնելու վերաբերյալ գրությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը, Հանձնաժողովը որոշեց.

1. Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի, Կարգի 32-րդ կետի 13-րդ և 19-րդ ենթակետերի, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի 9.3.-րդ և 9.4.-րդ կետերի պահանջներով՝ «ԱՐՍՇԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

2. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-3-րդ | «ԱՐՍՇԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ | անբավարար |

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. «ԱՐՍՇԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել համապատասխան գործընթաց՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով «ԱՐՍՇԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտերը մերժելու վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ռեկտորին՝ սահմանված կարգով:

3. Ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված պահանջները:

4. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել Ընթացակարգի շրջանակում հրապարակվող հայտարարությունները հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Գ. Մնացականյան ____________

*Հանձնաժողովի անդամ՝*

Լ. Մինասյան ____________

Ռ. Ազիզյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Ս. Մելքոնյան ____________